

**«ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՎԵՊԻ» ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԻՐԸ ԵՎ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

Բանալի բառեր՝ Կեղծ-Կալիսթենես, հունարեն խմբագրություններ, հայերեն խմբագրություններ, ձեռագրեր, փոխառություններ, «ոճական հագուստ», Մովսես Խորենացի, Թովմա Արծրունի, Գրիգոր Մագիստրոս:

«Ալեքսանդրի վեպի» հին հայերեն թարգմանությունը, որ հայտնի է իբրև «Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացւոյ» (կամ «Պատմութիւն ստոյն Կալիսթենէայ»), մեզ է հասել աշխարհի տարբեր վայրերում պահվող շուրջ 70 ձեռագրով, մեծ մասամբ՝ Ժէ-ԺԸ դարերի: Թարգմանվելով հավանաբար Ե դարի 80-ական թվականներին՝ հունարեն հնագույն չպահպանված բնօրինակից (որից սերել են այլ խմբագրություններ), այն տարբեր ժամանակներում ենթարկվել է զգալի փոփոխությունների, համառոտումների ու հավելումների:

Վաղ միջնադարյան թարգմանական գրականության մեջ (Աստվածաշունչ, աստվածաբանական և վարքագրական, իսկ ավելի ուշ՝ փիլիսոփայական և մեկնողական երկեր, եկեղեցու պատմություններ) կիսապատմական ու գեղարվեստական «Ալեքսանդրի պատմությունը» բացառիկ էր իր աշխարհիկ բովանդակությամբ: Այն թարգմանելու նպատակը թերևս ճակատագրական պահին պարսից նվաճողական քաղաքականության դեմ պայքարի ելած հայերին Ալեքսանդր Մեծի երևակայական կերպարով ոգևորելն էր: Հետագայում այն սիրելի գիրք է դարձել, բանաստեղծների ոգեշնչել կաֆաներ գրելու և ներմուծելու դրանք հենց բնագրի մեջ, ապա, գոյատևելով նաև բանավոր ավանդության մեջ, հանգեցրել է մի տարբերակի առաջացմանը, որն էպիկական տարրերով աչքի ընկնող ձևափոխված պատում է:

1846 թ. հունարեն բնագրի իր հրատարակության մեջ Մյուլլերը¹ եղած խմբագրությունները բաժանել է երեք խմբի. Ա կամ Ալֆա՝ մեզ հասած հնագույն խմբագրությունը, որի հիմնական վկայությունը Փրզ. 1711 ձեռագիրն է (ԺԱ դար), Յ կամ Բետա, որին պատկանում է պահպանված ձեռագրերի մեծամասնությունը, իսկ գլխավոր վկայությունը, ըստ Մյուլլերի, Փրզ. 1685 ձեռագիրն է (1469 թ.), և Շ կամ Գամմա, որի հիմնական վկայությունն է Փարիզի Ազգային գրադարանի Supplement 113 (1567 թ.) կոչվող բնագիրը:

Մյուլլերի հրատարակած հունարեն բնագրի հիման վրա 1892 թ. Վիեննայի Մխիթարյան հայր Հակոբոս Տաշյանը լույս է ընծայել «Ալեքսանդրի պատմության» հայերեն թարգմանության մանրակրկիտ մի ուսումնասիրություն: Նա շեշտել է այն փաստը, որ, չնայած հայերեն հնագույն խմբագրությունը հիմնականում մոտ է պահպանված հնագույն հունարեն (Մյուլլերի A) խմբագրությանը, սակայն ոչ միշտ է համապատասխանում դրան և սերտ զուգահեռներ ունի ավելի ուշ՝ B, և, պակաս չափով՝ C խմբագրության հետ, որը B խմբագրության վերամշակված ու ընդմիջարկություններով լրացված մի տարբերակ է: Ավելին՝ նա նկատել է, որ հայերեն բնագիրը նմանություններ ունի երկի՝ Գ դարի կեսին Հուլիոս Վալերիոսի կատարած լատիներեն, ինչպես նաև ասորերեն թարգմանությունների հետ (այդ բոլորն այսպես կոչված Ալեքսանդրյան խմբի բնագրեր են, որ ծագել են հունարեն հնագույն կորած սկզբնագրից²): Տաշյանը մատնացույց է արել հայերեն հատվածներ՝ անշուշտ սկզբնաղբյուրից սերող, որոնք պարունակում են հունարեն A խմբագրությունից բացակայող և մասամբ լատիներեն թարգմանությամբ հաստատվող տեղեկություններ: Նա նոր օրինակներով հաստատել է արդեն առկա այն ճիշտ կարծիքը, որ հայերեն թարգմանությունն արվել է կորսված հունարեն սկզբնագրից և, հետևաբար, կարևոր է՝ հունարենը վերանայելու և վերականգնելու համար:

1896 թ., Տաշյանի աշխատության տպագրությունից չորս տարի անց, Ռաբեն³ հրատարակել է հայերեն բնագրի իր հակադարձ թարգմանությունը հունարենի, որը հետագայում օգտագործել է Քրոլլը՝ հունարեն A խմբագրու-

¹ *Pseudo-Callisthenis historiam fabulosam ex tribus codicibus nunc primum edidit, Itinerarium Alexandri et indices adiecit Carolus Müller*, Paris 1846.

² **Յ. Տաշեան**, Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ Վարուց Ալեքսանդրի, Վիեննա, 1892, էջ 7-19, 212-270:

³ **R. Raabe** (tr.), *Ιστορία Αλεξάνδρου: Die armenische Übersetzung der sagenhaften Alexanderbiographie (P.-C.) auf ihre mutmassliche Grundlage zurückgeführt*, Leipzig 1896.

Թյունը պատրաստելիս (տպագրվել է 1926 թ.)⁴: Ինչպես Տաշյանի ուսումնասիրություններից, այնպես էլ Ռաաբեի հետ-թարգմանության հիմքում հայերեն «Ալեքսանդրի վեպի» առաջին՝ Ռափայել Թրեանցի պատրաստած 1842 թ. հրատարակությունն էր⁵, որում իբրև հիմնական բնագիր վերարտադրված է երկի երկու հնագույն ձեռագրերից մեկը՝ Վնտկ. 424 (ԺԴ դ.)⁶: Այդ խիստ արժեքավոր ձեռագրի բնագիրն առաջին անգամ ներկայացնելով՝ Թրյանցը նաև առաջարկել է որոշ տարբերություններ, սակայն չի նշել, թե որ ձեռագրերից են դրանք:

Իր նոր հոգվածում Ջուստո Տրահինան տեղեկացնում է, որ Ռիչարդ Սթոունմենը և Տրիստանո Գարջուլոն պատրաստել են երկի հունարեն բնագրի ու լատիներեն թարգմանության նոր հրատարակություն և լույս են ընծայել եռահատորյակի առաջին երկու գիրքը⁷ (երրորդն էլ հրատարակության ընթացքում է): Տրահինան միաժամանակ արձանագրում է, որ շնայած այդ նոր քննական բնագիրն օգտակար է երկի ուսումնասիրության համար, սակայն սույն հրատարակության մեջ անհարկի թերագնահատված է հին հայերեն թարգմանության նշանակությունը: Ըստ նրա՝ հայերեն տարբերակը պետք է քննել «նույն մակարդակում, ինչ հունարեն խմբագրությունները», և այն իր կարևորությունը չի գիշում Հուլիոս Վալերիուսի լատիներեն թարգմանությունը⁸:

2003 թ. որակյալ նմանահանությունը տպագրվել է Վնտկ. 424 ձեռագիրը՝ իր բազմաթիվ գեղեցիկ նկարազարդումներով (ընդգրկված են նաև նկարներ այլ ձեռագրերից): Գիրքը հրատարակության է պատրաստել Ջուստո Տրահինան՝ Կ. Ֆրանկոյի, Տ. Գուլումջյանի և Կ. Վերոնեզե Արսլանի աշխատակցությամբ: Այն ընդգրկում է նաև երկի՝ Տրահինայի իտալերեն թարգմանու-

⁴ W. Kroll (ed.), *Historia Alexandri Magni* (Pseudo-Callisthenes), vol. 1, Recensio vetusta, Berlin, 1926 (reprint 1958).

⁵ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացու, Վենետիկ, 1842:

⁶ Տաշյանը ձեռքին ուներ նաև այլ ձեռագրեր (մասնավորապես՝ Վիեննայի Մխիթարյանների մոտ պահվող): Վենետիկի ձեռագիրը երկի՝ կաֆաներ ու նկարազարդումներ պարունակող հինագույն օրինակն է. հմմտ. Հ. Սիմոնյան, *Հայ միջնադարյան կաֆաներ*, Երևան, 1975, էջ 77:

⁷ R. Stoneman, T. Gargiulo (eds.), *Il Romanzo di Alessandro: Testo greco e latino a fronte*, I-II, Milano, 2007, 2012.

⁸ G. Traina, “Some Observations on the Armenian Pseudo-Callisthenes”, *Greek Texts and Armenian Traditions, An Interdisciplinary Approach*, ed. by Francesca Gazzano, Lara Pagani, and Giusto Traina, Berlin–Boston, 2016, pp. 23-30.

թյունը⁹: Հայերեն բնագրի այս տարբերակից է արվել նաև Ուոհոջյանի անգլերեն թարգմանությունը, որ տպվել է 1969 թ.¹⁰:

1913 թ. Փֆիստերը հրատարակել էր երկի լատիներեն մեկ այլ՝ Նեապոլի ավագ քահանա Լեոնի ժ դարի թարգմանությունը, որտեղ նշում էր, թե «Ալեքսանդրի պատմության» այս խմբագրությունը ևս պատկանում է նույն խմբին, ինչ որ հայերեն ու ասորերեն, ինչպես նաև Հուլիոս Վալերիուսի լատիներեն թարգմանությունները¹¹: Սակայն հայերեն անգլերեն թարգմանած Ուոհոջյանը մի քանի օրինակով ցույց է տվել, որ հայերեն բնագիրը շատ ավելի ամբողջական և կապակցված շարադրանք է, քան Լեոյի լատիներենը (այն թողնում է համառոտ մի խմբագրության տպավորություն): Ուոհոջյանը ենթադրում է, որ կա՛մ Լեոյի լատիներենի հունարեն սկզբնագիրն էր մի համառոտ տարբերակ, կա՛մ էլ թարգմանիչն ինքն էր այն կրճատել¹²:

«Ալեքսանդրի պատմությունն» այնքան հեղինակավոր գործ է եղել միջնադարյան Հայաստանում, որ անգամ վերագրվել է Արիստոտելին (նաև եզովպոսին): Վնտկ. 424 ձեռագրում և ավելի ուշ ընդօրինակություններում բնագրի առաջին մեծ հատվածից անմիջապես հետո կարդում ենք. «Կատարեցան ծնունդք եւ գործք Աղեքսանդրի Մակեդոնացույ, գրեալ յիմաստնոյն Արիստոտելէ»¹³: Մյուսները նման մի բան է մատնացույց արել ժԲ դարի հեղինակ Եվստաթիոս Թեսաղոնիկեցու՝ Դիոնիսիոս Պերիեգետեսի մեկնության մեջ. Ἀριστοτέλης ἐν πέμτῳ Περὶ Ἀλεξάνδρου («Արիստոտելն Ալեքսանդրի մասին հինգերորդ [գրքում]»), սակայն դա գրչական սխալ է համարվում (ընդօրինակողը շփոթությունամբ «Արրիանոսի» փոխարեն գրել է «Արիստոտել») ¹⁴:

Չնայած առաջին հայացքից թվում է, թե Վնտկ. 424 ձեռագրի բնագիրը բավական փոփոխվել է խմբագրի՝ ժԳ-ԺԴ դդ. հոգևորական գործիչ և բանաստեղծ Խաչատուր Կեչառեցու ձեռքով (նա բնագրի տարբեր հատվածների

⁹ G. Traina (ed.), *La Storia di Alessandro il Macedone: codice armeno miniato del XIV secolo* (Venezia, San Lazzaro, 424), con la collaborazione di C. Franco, D. Kouymjian & C. Veronese Arslan, Padua, 2003.

¹⁰ A. M. Wolohojian (tr.), *The Romance of Alexander the Great by Pseudo-Callisthenes*, New York and London, 1969.

¹¹ F. Pfister (ed.), *Der Alexanderroman des Archipresbyters Leo*, Heidelberg, 1913, pp. 40-41.

¹² A. M. Wolohojian, *The Romance of Alexander the Great*, pp. 3-5.

¹³ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացույ, էջ 73:

¹⁴ Մյուսներն ուսումնասիրել է այն հարցը, թե ինչ հեղինակների է երկը վերագրվել. տե՛ս Pseudo-Callisthenis historiam fabulosam, pp. 86-93:

միջև ներմուծել է իր գրած բազմաթիվ միահանգ կաֆաներ, իսկ վերջում ավելացրել է հինգ բարառնություն. տե՛ս ստորև), բայց այն համարվում է հունարեն սկզբնագրին ամենամոտ հայերեն խմբագրությունը: Այս տեսակետն անհամոզիչ կերպով վիճարկել է Հ. Միմոնյանը՝ Ալեքսանդր Մակեդոնացու պատմության իր քննական, ավելի ճիշտ՝ «գիպլոմատիկ» հրատարակության մեջ¹⁵: Միմոնյանն ուսումնասիրել է ԺԳ դարում ընդօրինակված ՄՄ 10151 ձեռագիրը և, քանի որ այն հայերեն «Ալեքսանդրի վեպը» պարունակող ամենահին գրչագիրն է՝ զերծ ուշ հեղինակների բանաստեղծություններից, եզրակացրել, թե դա բնագրի նախնական տարբերակն է: Նա իր գրքում զետեղել է երեք խմբագրություն՝ Ա, Բ և Գ. Ա-ն հաշատուր Կեչառեցու խմբագրությունն է՝ հետագայում լրացված նաև այլ խմբագիրների ձեռքով, Բ-ն՝ ԺԳ դարի ձեռագրի «նախնական» խմբագրությունն է, իսկ Գ-ն՝ երկի ժողովրդական պատումը, որ մեզ է հասել բանահյուսական ճանապարհով: Իբրև ուշ ու վերջնական գիտվող Ա խմբագրության հիմնական ձեռագիր Միմոնյանն օգտագործել է ՄՄ 5472-ը (ԺԷ դարի կես), որ ընդհանուր առմամբ համապատասխանում է Վնտկ. 424-ին, սակայն պարունակում է ևս երկու բանաստեղծի՝ Զաքարիա Գնունեցու և Գրիգորիս Աղթամարցու լրացուցիչ ոտանավորներ: Տողատակում Միմոնյանը բերել է Վնտկ. 424 և երեք այլ ձեռագրի տարընթերցումները (Վնտկ. Քյուրտյան 2 [1526 թ.], Եղմ. 473 [1536 թ.] և ՄՄ 10448 [ԺԶ-ԺԷ դդ.]): Բ-ի համար, որ իր կարծիքով «նախնական» խմբագրությունն է, նա օգտագործել է ԺԳ դարի միակ ձեռագիրը՝ ՄՄ 10151, իսկ Գ-ին՝ «ժողովրդականացված պատումի» համար՝ ՄՄ7993 (1672 թ.) և ՄՄ 6488 (ԺԹ դ.) ձեռագրերը:

Միմոնյանի առաջաբանում թվարկված են «Ալեքսանդրի պատմությունը», դրանից մասեր կամ դրան վերաբերող կաֆաներ պարունակող ձեռագրերը (էջ 34-65). 35-ը պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, 16-ը՝ Վենետիկում, 7-ը՝ Երուսաղեմում, 4-ը՝ Վիեննայում, 3-ը՝ Ս. Պետերբուրգում, 2-ը՝ Բեռլինի Ազգային գրադարանում. ընդամենը՝ 67: Փրգ. 291-ը (1646 թ., 1ա-187բ) այդ ցանկից բացակայում է:

Յուրաքանչյուր ձեռագրի մասին նախ ասվում է, թե որ խմբագրությանն

¹⁵ Պատմություն Ալեքսանդրի Մակեդոնացույ. հայկական խմբագրություններ, աշխատասիրությունը Հ. Միմոնյանի, Երևան, 1989 (այսուհետև Հայկական խմբագրություններ):

է այն պատկանում: Բացի իր հրատարակած «նախնական», «հետագա» խմբագրություններից և «բանավոր պատումից», Սիմոնյանն առանձնացրել է մի «համառոտ խմբագրություն» ու «միջանկյալ խմբագրություն», նաև երեմիա Քյոմուրճյանի հայատառ թուրքերեն թարգմանությունը (Վեն. 473-ը երեմիայի ինքնագիրն է, կան և ուրիշ ձեռագրեր): «Միջանկյալ» խմբագրությունը «նախնական» ու «հետագա» խմբագրությունների միջև գտնվող տարբերակ է: Սիմոնյանի հավաստմամբ՝ այն աչքի է ընկնում բնագրային ամբողջականությամբ, պարունակում հատվածներ, որոնք բացակայում են մնացած բոլոր օրինակներից, «այլև ավելի լավ են պահպանվել, քան հունալատինական հնագույն տեքստերում, որտեղ այդ հատվածները աղճատ և թերի են»: Նա եզրակացնում է, որ ինչպես «նախնական», այնպես էլ «միջանկյալ» խմբագրությունները կարող են նպաստ բերել հունարեն «նախաբնագրի» վերականգնմանը¹⁶: Խնդիրը վերստին ուսումնասիրելու անհրաժեշտություն կա, որով էլ մենք զբաղված ենք այժմ:

Համառոտի մասին ասված է, որ այն մեխանիկորեն համառոտված է «հետագա» խմբագրությունից (էջ 19-20)՝ ի հաշիվ նկարագրությունների, նամակների, ուղերձների և այլն: Արդյունքում բազմաթիվ կաֆաներ դարձել են սյուժեի կրողները: Խմբագրությունը պարունակում է նաև իտալացի Կեչառեցու բարաոնությունները:

Ավելացնենք, որ համառոտման հետևանքով բովանդակությունը երբեմն թերի է դարձել: Այս բնագիրը պահպանվել է բավական թվով (15) ձեռագրերով, ուստի հետաքրքիր է այն առումով, թե ուրիշ ինչ տարբերակով է «Ալեքսանդրի վեպը» շրջանառվել Հայաստանում: Ձեռագրերը հետևյալն են. ՄՄ 1449 (1656 թ., 269ա-336ա), ՄՄ 1781 (1765 թ., 7ա-62ա), ՄՄ 1782 (1652 թ., 2ա-61ա), ՄՄ 3387 (1635 թ., ամբողջ ձեռագիրը՝ 6ա-176ա), ՄՄ 3981 (ԺԸ դար, ամբողջ ձեռագիրը՝ 1ա-61ա), ՄՄ 7031 (1709 թ., 4ա-85բ), ՄՄ 8003 (ԺԹ դար, 60ա-170ա), Վնտկ. 893 (1665 թ., ամբողջ ձեռագիրը՝ 1-251), Վնտկ. 1107 (ամբողջ ձեռագիրը՝ 1ա-159բ), Վնտկ. 1489 (1673 թ., ամբողջ ձեռագիրը՝ 1ա-125բ), Վնտկ. 1905 (ամբողջ ձեռագիրը՝ 1ա-45ա), Եղմ. 1080 (ԺԶ դար,

¹⁶ «Առաջաբան», էջ 16: Հ. Սիմոնյանը նշում է այդ խմբագրությունը պարունակող հետևյալ ձեռագրերը. ՄՄ 723, 1734 թ., հատված՝ 55բ-56ա, ՄՄ 10448, ԺԶ-ԺԷ դդ., 5ա-230բ և Ս. Պետերբուրգի Արևելյան ձեռագրերի ինստիտուտ A-76, 5ա-234բ:

ամբողջ ձեռագիրը՝ 1ա-57ա), Վիեն. 370 (1658 թ., 1ա-112ա), ՍՊբ ԱԳ *Арм. H.C.* 38 (1653թ., ամբողջ ձեռագիրը՝ 1ա-154բ), Բուլ. 805 (1535 թ., 1ա-102բ)¹⁷: Մենք այս բնագիրը պատրաստում ենք հրատարակության:

Թվարկված ձեռագրերի մեջ առանձնանում է նկարազարդ Բուլ. 805-ը, որի գրիչը, ծաղկողը և ստացողը հայտնի բժիշկ Հովասափ Սեբաստացին է¹⁸: Ի տարբերություն հիմնական բնագրի սև թանաքի՝ կաֆաները գրված են կարմիր ու կանաչ թանաքներով¹⁹: Հավանաբար տարբեր գույներն օգտագործվել են՝ կաֆաների հեղինակներին տարբերակելու նպատակով: Կաֆաների մեծ մասը (երբեմն՝ տարրնթերցումներով) առկա է Միմոնյանի Ա խմբագրության մեջ: Բայց կան հատ ու կենտ՝ այդ խմբագրությունից բացակայող կաֆաներ: Օրինակ (52 բ)

Է չարխ, ես քեզ ոնց աստամ,
 Երբ չունիս զոք ոչ մատուտր,
 Ոչ դալ ՚ի ոչ երդում ոնիս,
 Ջի քո սիրտն է խիստ նենգատր:
 Ջով որ կամենաս այսար,
 Կու դնես շատոց թագատր,
 Եւ վաղն ձգես յաչիչ,
 Հաւասար մոխրոյ և մոյրո:

Այս կաֆան, որոշ տարբերություններով, հատված է Ֆրիկի հայտնի բանաստեղծությունից²⁰:

Բուլ. 805-ի մանրանկարները, որ աչքի են ընկնում պարզ ոճով, բազմաթիվ են. դրանք զարդարում են բնագիրը պարունակող 204 էջից գրեթե

¹⁷ Ձեռագիրն առկա է անցանց՝ https://digital.staatsbibliothek-berlin.de/werkansicht?PPN=PPN682400300&PHYSID=PHYS_0111&DMDID=DMDLO0003&view=overview-toc

¹⁸ Նրա մասին տե՛ս Գ. Յովսեփեան, «Յովասափ Սեբաստացի», *Արարատ*, 1918, ապրիլ-դեկտեմբեր, էջ 226-280:

¹⁹ Խաչատուր Կեչառեցու կաֆաներն ի սկզբանե գրված էին կարմիր թանաքով: Դրանցից տարբերակելու նպատակով Գրիգորիս Աղքամարցին իր կաֆաները գրել էր կանաչ թանաքով. Հմմտ. *Edda Vardanyan*, “La portée politique de l’illustration des manuscrits du Roman d’Alexandre arménien,” *Alexandre le Grand à la lumière des manuscrits et des premiers imprimés en Europe* (XII^e-XVI^e siècle), sous la direction de *Catherine Gaullier-Bougassas*, Brepols, 2014 (pp.223-250), pp. 227, 235:

²⁰ Ֆրիկ, *Դիւան*, աշխատասիրութեամբ *Տիրայր արքեպիսկոպոսի*, Նիւ եոբֆ, 1952, էջ 373-374 (Ի էջ.24-36):

կեսը՝ 81 էջ²¹: Հովասափը նկարների մեծ մասն օժտել է դրանց բովանդակությունը լուսաբանող կարճ մակագրություններով. օրինակ՝ «Աղեկսանտր գիրկս արկանէ Դարեհի» (52ա), «Պովրոս գրէ առ Աղեկսանտր» (63ա): Երբեմն պարզապես նշված է պատկերված անձանց ու վրինելը, օրինակ՝ պատկերված են Ալեքսանդրի ծնողները, և համապատասխանաբար գրված է՝ «Փիլիպոս է», «և կինն Ոլոմպիայ է» (7ա), իսկ Ալեքսանդրի թունավորման գրվագում՝ «Աղեկսանդր է» և «դեղ տըռողն է» (6բ):

Բնագիրը ոչ միայն համառոտված է, այլև, Սիմոնյանի Ա խմբագրության համեմատ, ավելի միջինհայերենյան նկարագիր ունի: Բերենք մի քանի օրինակ՝ «յաւանակ» (էջ 262) բառի փոխարեն կարդում ենք «քուռակ» (89ա): Կան նկարների այսպիսի մակագրություններ. «չոպանն է» (4ա), «տըսմով կուռք է արած» (29բ, «տըսմ/տլիսմ») արաբերենից փոխառված բառ է, որ նշանակում է «դյուխություն»), «թագաւորն շնորհքկալ լինայ» (35բ) և այլն: Քերականական ձևերից՝ «թողունք», «չարախօսեց»: Աղավաղված անուններ. «առ Խսիական գոգովն» (էջ 251 – *περὶ τὸν Ἰσσιακὸν κόλπον*, *Alex. B 2.23.5*) դարձել է «առ Սինէական գոգովն» (56ա): Բայց մեկ այլ դեպքում համառոտի «Եմէդեղոս» (47բ) ընթերցումն ավելի մոտ է հունարենի *Εὐμηλος* (*Alex. A 2.14.1*) անվանը, քան ընդարձակի «Մեդեդէոսը» (էջ 212):

«Ալեքսանդրի պատմության» առաջին երկու խմբագրության մասին Սիմոնյանի կարծիքը հետագայում հերքվել է: Ջուստո Տրահինան²² զուգահեռ օրինակներով և հունարեն սկզբնագրի հետ համեմատությամբ հստակորեն ցույց է տվել, որ ժԳ դարի ձեռագրի բնագիրը, չնայած չի պարունակում հետագա բանաստեղծություններ, իրականում փոփոխված ու համառոտված մի տարբերակ է Վնտկ. 424 և նույն խմբի այլ ձեռագրերով պահպանված ավելի հին բնագրի, և որ Կեչառեցու խմբագրությունն այս կամ այն չափով արտացոլում է Ե դարի վերջի հայերեն թարգմանությունը:

Սիմոնյանի տեսակետը մերժել է նաև Փիթեր Քաուլին՝ առաջարկելով հայերեն թարգմանությունը բաժանել ոչ թե երեք, այլ չորս խմբագրության ու

²¹ Մեկ այլ ձեռագիր՝ ՄՄ 3387 (1635), «գրեթե ամեն էջի վրա» ունի մակագրություններով մանրանկարներ. տե՛ս Հայկական խմբագրություններ, էջ 38: Սիմոնյանի նկարագրած ձեռագրերի քվում մանրանկարներ ունեն տասը:

²² G. Traina, “Problemi testuali dello Pseudo-Callistene armeno,” in *La diffusione dell’eredità classica nell’età tardoantica e medievale: forme e modi di trasmissione*, a cura di Alfredo Valvo, Turin, 1997, pp. 233-240.

զարգացման փուլի: Նա ավելացրել է շորրորդ՝ դեռևս չհրատարակված մի նախնական խմբագրություն, որից սերում է Կեչառեցու բնագիրը, որի ենթագրերի վաղ (ԺԳ դարին նախորդող) վկայությունները կորսված են և որն այժմ փոփոխված տեսքով առկա է ուշ՝ ԺԶ–ԺԸ դարերի ձեռագրերում (Քաուլին չի նշում դրանց համարները)²³: Սիմոնյանի առաջաբանի ուշագրի ընթերցումը հստակություն է մտցնում այդ հարցում: Նա նշում է մի շարք ձեռագրեր (ՄՄ 1783, ՄՄ 3182, ՄՄ 5627, ՄՄ 6485, ՄՄ 9631, Վնտկ. 592, Վնտկ. 1390, Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտ²⁴ 157), որոնք բնորոշում է որպես «նախնական խմբագրությանը» պատկանող, ավելացնելով, թե դրանք սերում են ՄՄ 10151-ի լրացված տարբերակից²⁵: Այդ բնագրի հիմնական մասը (11ա-98բ) ԺԳ դարի ձեռագիր է, որը սկզբից ու վերջից թերի է եղել: 1606 թ. բացակայող մասերը (2ա-10բ և 99ա-124ա) լրացրել է Անտոն աբեղան²⁶: Սա է Քաուլին անվանել «դեռևս չհրատարակված մի նախնական խմբագրություն», որ փոփոխված տեսքով առկա է ուշ՝ ԺԶ–ԺԸ դարերի ձեռագրերում (ավելացնենք նաև ԺԹ դարի ՄՄ 1783 ու Վնտկ. 1390 ձեռագրերը):

Հիշյալ կարծիքի կողմնակից են նաև Գ. Ուլուհոջյանը և Ս. Մանչինի Լոմբարդին, որոնք համատեղ մի հոդվածում ցույց են տվել, թե հայերեն Բ խմբագրությունը, որ Սիմոնյանը նախնական է համարել, իրականում Ժ-ԺԱ-րդ դարերի վերամշակում է, իսկ Խաչատուր Կեչառեցու կաֆաներով ուղեկցվող «Ա» խմբագրության բուն բնագիրը շատ ավելի մոտ է հունարեն սկզբնագրին (հատկապես Բ խմբագրությանը)²⁷:

Ուսումնասիրությունը նաև պարզել է (Ալեքսանդրիայի նկարագրության

²³ P. Cowe, “Aspects of the Translation and Redaction Process of the Alexander Romance in Armenian,” in *Proceedings of the Fifth International Conference on Armenian Linguistics* (McGill University, Montreal, Quebec, Canada, May 1-5, 1995), ed. Dora Sakayan, Delmar, New York, 1996, pp. 245-260 (246-247).

²⁴ Այժմ՝ Ս. Պետերբուրգի Արևելյան ձեռագրերի ինստիտուտ:

²⁵ Հայկական խմբագրություններ, էջ 36 (№ 8), 37 (№ 10), 40 (№ 16), 42 (№ 19), 49 (№ 32), 55 (№ 40), 56 (№ 44), 63 (№ 64): ՄՄ 5627-ի և Լենինգրադի Արև. ինս. 157-ի բնագիրն, ըստ Սիմոնյանի, առագաված է ՄՄ 10151-ից:

²⁶ Հայկական խմբագրություններ, էջ 49 (№ 33):

²⁷ S. Mancini Lombardi, G. Uluhogian, “Due redazioni per il Romanzo di Alessandro armeno: tessere di un mosaico perduto?”, *La diffusione dell’eredità classica nell’età tardoantica e medievale. Il “Romanzo di Alessandro” e altri scritti, Atti del Seminario internazionale di studio* (Roma-Napoli, 25-27 settembre 1992), a cura di Rosa Bianca Finazzi e Alfredo Valvo, Edizioni dell’Orso, 1992, pp. 157-174.

[Գ 62] օրինակով), որ Մովսես Խորենացու բնագիրն ավելի մոտ է Սիմոնյանի հրատարակած Ա (իր կարծիքով՝ հետագա) խմբագրությանը, քան Բ-ին («նախնականին»), ավելի ճիշտ՝ Պատմահոր ձեռքին եղել է Ա-ին մոտ մի նախնական կամ դրանից սերող չպահպանված խմբագրություն²⁸:

Բնագրագիտական այս հակիրճ տեղեկություններից հետո մեր մյուս նպատակն է՝ ամփոփ ձևով վերհիշել, թե ինչ ազդեցություն է գործել «Ալեքսանդրի վեպը» հայ պատմագրության և առհասարակ գրականության վրա՝ ներկայացնելով մի շարք զուգահեռներ: Դրանք հիմնականում հայտնի են վաղուց ի վեր²⁹:

Նախ անդրադառնանք Մովսես Խորենացուն³⁰, որի գրքում կան բազմաթիվ բառացի փոխառություններ Կելծ-Կալլիսթենեսից: Քանի որ, ըստ ավանդական տեսակետի, «Հայոց պատմությունը» նա գրել է 480-ականների սկզբին, երբ, ինչպես ենթադրվում է, «Ալեքսանդրի վեպը» թարգմանվել է հայերեն, ապա թարգմանությունը, ինչպես որ այլ թարգմանություններ (ասենք՝ Փիլոն Ալեքսանդրացու երկերի թարգմանությունը³¹), վերագրվել է Խորենացուն: Բանասերներն ընդունել կամ մերժել են այս տեսակետը: Խորենացու ժամանակի խնդիրը (որին սերտորեն առնչվում է նրա հնարավոր թարգմանությունների հարցը), դուրս է սույն հոդվածի նպատակից: Նշենք միայն, որ առ այսօր բավարար փաստեր չկան՝ հիշյալ ենթադրությունը վստահաբար ընդունելու կամ չընդունելու: Տաշյանն անգամ փորձել է համաժամանակյա քննություն կատարել՝ ցույց տալու համար, որ Խորենացին թարգմանությունն արել էր իր երկը գրելու հետ մեկտեղ: Անվանի բանասերը նույնիսկ մատնացույց է արել, թե որ պահին էր Պատմահայրը սկսել թարգմանել, և որտեղ էր հասել իր գիրքը գրելիս, երբ ավարտել էր թարգմանությունը:

Ուշագրավ է, որ չնայած Տաշյանի հաշվարկով Խորենացին քսանից ավելի փոխառություն ունի «Ալեքսանդրի վեպից», սակայն «Հայոց պատմության»

²⁸ G. Traina, “Problemi testuali,” p. 240 և M. Bernardelli, “Movsēs Xorenac’i e il Romanzo di Alessandro: un esempio di intertestualità”, *Bnagirk’ yišatakac’*, *Documenta memoriae, Dall’Italia e dall’Armenia, Studi in onore di Gabriella Uluhogian*, Bologna, 2004. pp.139-164.

²⁹ Տե՛ս 3. Տաշեան, *նշվ. աշխ.*, էջ 24-43 (Տաշյանն իր հերթին օգտագործել է այլ բանասերների երկեր):

³⁰ Մովսես Խորենացի, *Պատմություն Հայոց*, ֆինական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, նմանահամութիւն, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երևան, 1991 (ստալին հրատ.՝ Տփղիս, 1913):

³¹ Տե՛ս, օրինակ, Նորայր Աբ. Մովսէս, «Մովսէս Խորենացի եւ Փիլոն», *Վանասուր*, Երուսաղէմ, 1993, էջ 74-77:

երեք գրքից առաջինում չկա ոչ մի քաղվածք, մոտ հինգը կա երկրորդում, իսկ երրորդում նա դիմել է Կեղծ-Կալլիսթենեսին ավելի քան տասնհինգ անգամ (և, որ կարևոր է, երեք չի հիշատակել իր աղբյուրը): Երկրորդ գրքում մեջբերումներն «Ալեքսանդրի վեպի» սկզբից են, իսկ երրորդում՝ տարբեր մասերից: Ուստի Տաշյանը եզրակացրել է, որ «Հայոց պատմության» առաջին գիրքը գրելիս Խորենացին դեռ չէր սկսել թարգմանել: Հավանաբար ձեռնամուխ էր եղել դրան երկրորդ գրքի տասներեքերորդ գլուխը գրելիս և, թվում է, ավարտել էր թարգմանությունը, երբ գրում էր երրորդ գրքի սկզբնական գլուխները³²:

«Ալեքսանդրի վեպից»՝ իբրև աղբյուրից Խորենացին օգտվել է³³ յուրօրինակ ու ինչ-որ չափով արտասովոր ձևով: Նա մեծ մասամբ չի դիմել պատմական տեղեկություններին, այլ, ասես մի «շտեմարանից», քաղել է արտահայտություններ ու ոճական հնարքներ՝ ուրիշ պատմական իրադարձություններ նկարագրելու և իր պատումի ոճը հարստացնելու նպատակով: Բերենք օրինակներ: Բ գրքի 63-րդ գլխում Խորենացին այսպես է պատմում Տրդատ Բ գրատունու և Սյունյաց իշխան Բակուրի վեճի մասին.

«Եւ եղև յաւուր միում կոչել յընթրիս Բակրոյ նահապետին Սինեաց. և յուրախանայն զինում, տեսեալ Տրդատայ զկին մի, զի յոյժ գեղեցիկ էր և երգէր ձեռամբ, որում անուն էր Նագինիկ՝ տրփացաւ և սաէ ցԲակուր. «Տուր ինձ զվարձակս զայս», և նա սաէ. «Ոչ տամ, զի հարձ իմ է»: Բսկ Տրդատայ բուն հարեալ ի կինն՝ յինքն քարշեալ ի բազմականն, շամբշեալ վաաշէր ըստ օրինակի երիտասարդի անարգել տարփատորի: Ըսդ որ խանդացեալ Բակրոյ՝ յարեաւ հանել զնա ի նաննէ: Բայց յոտն կացեալ Տրդատայ, ծաղկակալ սկտեղըն իբրև զինու վարեցաւ, նա և զբարձակիցսն ի բազմականացն ի բաց պուղեաց: Եւ անդ էր տեսանել նոր զոմն Ողիսևս՝ զՊեննելուպայ զգեղեիս սատակելով, և կամ զՂապիթեայցն և զՅուշկապարկացն կոիւս ի վերայ Պերիթեայ հարսանեացն»³⁴:

Այս պատմությունը նման է «Ալեքսանդրի վեպի» հայերեն թարգմանության Կէ գլխի³⁵ մի հատվածի, որտեղ նկարագրվում է, թե ինչպես ոմն Պավսանիաս («Պաւսիանոս»), ցանկացավ «ի հանդէսն» առևանգել Ալեք-

³² 3. Տաշեան, նշվ. աշխ., էջ 72-77:

³³ Զուգահեռների համար տե՛ս նշվ. աշխ., էջ 45-84:

³⁴ Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց, էջ 195-196:

³⁵ Այստեղ և այսուհետև համեմատությունները Հ. Սիմոնյանի պատրաստած հրատարակության «Ա» խմբագրության հետ են (գլուխների նման բաժանում ունի միայն այդ խմբագրությունը):

սանդրի մորը՝ Օլիմպիադային («Ոլիմպիաս»)՝³⁶։ Սակայն ավելի հետաքրքրական է, որ *Խորենացին* բառացիորեն իր շարագրանքի մեջ է ներմուծել «անդ էր տեսանել նոր զոմն Ուրիսևս՝ զՊենելոպայ զսեղեխս սատակելով, և կամ զՂապիթեայցն և զՅուշկապարկացն կոիւս ի վերայ Պերիթեայ հարսանեացն» նախագասությունն «Ալեքսանդրի վեպի» ԾԸ-ԾԹ գլուխներից։ Այնտեղ նույն զուգահեռները բերվում են՝ նկարագրելու համար Ալեքսանդրի պահվածքն իր հայր Փիլիպոսի և Կղեոպատրայի հարսանիքին (որի հետ Փիլիպոսն ամուսնանում էր՝ թողնելով Ալեքսանդրի մայր Օլիմպիադային), երբ նա «բարկացաւ և որպէս ունէր զբաժակն ի ձեռինն՝ ձգեաց ի Լիւսինայ և եհար զգագաթն հացկատակին և սատակեաց զնա», իսկ քիչ անց՝ «կորգեաց ի հարէն զսուսերն և զամենեսեան անդ զբազմեալսն կիսախողխող արար»³⁷։

«Հայոց պատմության» երրորդ գրքի Խ գլխում *Խորենացին* խոսում է Վարազդատ թագավորի արտասովոր ունակությունների մասին (նա, ըստ Պատմահոր, հայոց գահին էր բազմել պարսից արքա Շապուհ Բ-ի հիսունհինգերորդ տարում)։ *Խորենացին* պատմում է.

«... Առաջին մարտին պատահեաց աւազակաց ոմանց Ասորոց ի դժուարս Դարանաղոյ, և փախստեայս արարեայ՝ հետամուտ լինէր։ Իսկ նոցա անցեայ ընդ նեղուցս կամրջին Եփրատայ՝ ընկեցին զփայտն զկնի իրեանց, այլ նորս հասեայ՝ վազեաց զԵփրատս առաւել քան զղակոնացին Քիոնեայ վազն քսան և երկուց կանգնոց չափ։ Եւ անդ էր տեսանել նոր զոմն Աքիլլևս ընդ Սկամանդրոս գետ վազելով»³⁸։

Օլիմպիական խաղերում հաղթող լակոնացի Քիոնի անունը եվսեբիոսի «Ժամանակագրությանից» է³⁹, իսկ Վարազդատի ցատկի համեմատությունը Աքիլլեսի ցատկի հետ՝ «Ալեքսանդրի վեպի» ձԻԲ գլխից («զՍկամանդրոս գետ, ընդ որ վազեաց Աքիլլևս»), որտեղ Ալեքսանդրը գնում է Իլիոն քաղաքը, մոտենում է Սկամանդրոս գետի այն մասին, որտեղ, կարծում էին, Աքիլլեսը ցատկել է գետի մեջ ու կոտորել տրոյացիներին (ինչպես պատմում է Հոմերոսը), և զարմանում է, որ գետն այնքան լայն չէ, որքան ինքը կարծել էր⁴⁰։

³⁶ Հայկական խմբագրություններ, էջ 119:

³⁷ Հայկական խմբագրություններ, էջ 114:

³⁸ **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն հայոց, էջ 308:

³⁹ Հմմտ. Եւսեբի Պամփիլեայ Կեսարացույ ժամանակականք երկամսնեայ, աշխ. Մ. Աւգերեանի, մասն Ա, Վենետիկ, 1818, էջ 286. «Քիոնիս Գակոնացի երրորդ ի ստադիոն, որոյ մի վազ էր ԻԲ. կանգուն»:

⁴⁰ Հայկական խմբագրություններ, էջ 165:

Հետագայում «Ալեքսանդրի վեպի» այս հատվածը՝ մի քիչ փոխված, Հոմերոսի կենսագրության մեջ են ներմուծել Դիոնիսիոս Թրակացու քերականական երկի երկու մեկնիչ՝ Հովհաննես Երզնկացիին և Հովհաննես Ծործորեցիին⁴¹ (դա միայն վերջերս է նկատվել բանասիրության մեջ⁴²): Ընդ սմին ուշագրավ է, որ հորենացին թյուրիմացաբար այնպես է հասկացել, թե Աքիլլեսը ցատկել է ոչ թե գետի մեջ (ինչը հստակ է «Ալեքսանդրի վեպի» հունարեն բնագրում. *Σκάμανδρον ποταμόν, εἰς ὃν ἦλατο Αχιλλεύς*), այլ վրայով:

Մեկ այլ օրինակում (II ՀԹ) հորենացին խոսում է հայոց Տրդատ արքայի սիրանքների մասին: Նա հայտնում է, որ Տրդատի գահակալման տարիների վերաբերյալ տեղեկություններն ինքը քաղել է Փիրմիրխանոս եպիսկոպոսից (մ.թ. Գ դար), սակայն հատվածում կան զուգահեռներ նաև Եվսեբիոսի «Ժամանակագրության» և «Ալեքսանդրի վեպի» հետ: Խորենացին գրում է. «Նախ ի մանկութեանն յերիվար կամակար աշտանակեալ եւ կորովի ձիավարեալ, եւ զէնս շարժեալ յաշողակաբար, եւ այլ պատերազմականս ուսանել ախորժակս. ապա... ի մրցանակս ագոնին առաւելեալ քան զԿղիտոստրադոս հռոդացի, որ զվզէ եւեթ կալեալ յաղթէր: Դարձեալ եւ քան զԿերասոս արգիացի...»: Հետո պատմում է, թե ինչպես Տրդատը գերազանցեց այդ հույներին: «Կամակար աշտանակեալ» արտահայտությունն «Ալեքսանդրի վեպի» ԼԲ գլխից է, որտեղ նույնն ասվում է Ալեքսանդրի մասին («կամակար ի ձի աշտանակէր»), իսկ օլիմպիական խաղերում հաղթողների անունները Եվսեբիոսից գրքից են: Այդ աղբյուրներից ներմուծված արտահայտությունների օգնությամբ Խորենացին պարզապես ներկայացնում է Տրդատի քաջագործություններն առավել մանրամասնորեն և բարձր ոճով:

Ալեքսանդրիայի իր նկարագրության մեջ (III, ԿԲ) Խորենացին օգտվել է Կեղծ-Կալլիսթենեսից ու Փիլոնից՝ միմյանց հյուսելով նրանցից քաղած արտահայտություններ, ինչը բնագրերը կողք-կողքի դնելով ցույց է տվել Գրիգոր հալալթյանցը⁴³: Իր շարագրանքն այսպիսի փոխառություններով հարստաց-

⁴¹ Հմմտ. **Յովհաննէս Երզնկացի** (1230-1298), *Հաւաքումն մեկնութեան քերականի*, աշխատասիրութեամբ Լ. Խաչերեանի, Լոս Անճելլոս, 1983, էջ 94-95, և **Յովհաննէս Ծործորեցի** (1283-1340), *Համառօտ տեսութիւն քերականի, աշխատասիրութեամբ Լ. Խաչերեանի*, Լոս Անճելլոս, 1984, էջ 117-118:

⁴² **Գ. Մուրադյան**, *Հին հունական առասպելների արձագանքները հայ միջնադարյան մատենագրության մեջ*, Երևան, 2014, էջ 215:

⁴³ **Г. Халатянц**, *Армянские Аршакиды в "Истории Армении" Моисея Хоренского, опыт критики источников*, Москва, 1903, ч. I, Исследование, сс. 332-333, ч. II, Материалы, сс.

նելու հորենացու սովորությունը, հատկապես այդ նպատակով «Ալեքսանդրի վեպին» դիմելը, որ հստակ երևում է բերված երեք օրինակում, դեռևս 1956 թ. քննել է Գագիկ Սարգսյանը⁴⁴: Նա իրավացիորեն եզրակացրել է, որ լրացուցիչ աղբյուրներից, հատկապես Կեղծ-Կալլիսթենեսի երկից քաղված բառերն ու արտահայտությունները սոսկ «ոճական հագուստ» ու «հոետորական նյութի շտեմարան» են և չեն ազդում պատումի բովանդակության վրա: Նման փոխառություններն ինքին բավարար հիմք չեն տալիս կասկածի ենթարկելու հորենացու հաղորդած տեղեկությունների հավաստիությունը կամ նրա մատնանշած հիմնական աղբյուրի գոյությունը (որը պարզապես չափից դուրս հակիրճ է թվացել, ուստի և ինքն այլ բնագրերի օգնությամբ ոճավորել է քաղված տեղեկությունը): Իսկ «Ալեքսանդրի վեպն» այդ նպատակով նրա՝ հատկապես հաճախ օգտագործած աղբյուրներից է: հորենացու գերքննադատ Խալաթյանցն էլ Փիլոնի ու Կեղծ-Կալլիսթենեսի երկերը դասում է հորենացու երկրորդական աղբյուրների շարքում, որոնք, ի տարբերություն հիմնականների՝ նրան ոչ թե տեղեկություններ, այլ սոսկ ոճական նյութ են մատակարարել⁴⁵:

Այս մեթոդն է՛լ ավելի ուշագրավ կերպով է կիրառված Մովսես հորենացու «Հայոց պատմության» Գ գրքի ԻԶ և ԻԷ գլուխներում, որտեղ նա պատմում է, թե ինչպես է պարսից արքա Շապուհը գրավում Տիգրանակերտը: Բանասերները բառացի զուգահեռներ են մատնացույց արել այդ գլուխների և «Ալեքսանդրի վեպի» ՂԹ ու Ճ գլուխների միջև, որտեղ նկարագրված է Տյուրոսի պաշարումը, նաև՝ ՃԻԶ ու ՃԻԷ գլուխների, որոնցում Կեղծ-Կալլիսթենեսը պատմում է, թե ինչպես Ալեքսանդրը գրավեց Թեբեն: Ահա՛ որոշ զուգահեռներ:

1. «Ալեքսանդրի վեպ», ՂԹ.

«Եւ անդուստ զարս ժողովեաց, գայ, հասանէ ի Տիրոս: Կան ընդդէմ նորս տիրացիքն ոչ տունալ թոյլ անցանել ընդ քաղաքն իրեանց ... Եւ հզար կոռոյ եղելոյ զբազումս սպանին ի մակեդոնացոցն և ի պարտութիւն մատնի զարին

129-130.

⁴⁴ Գ. Սարգսյան, «Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես հորենացու մոտ», ԲՄ 3, 1956, էջ 31-42 (36-42):

⁴⁵ Գ. Халатяни, Армянские Аршакиды в “Истории Армении” Моисея Хоренского, опыт критики источников, ч. I, сс. 372-373.

Աղեքսանդրի: Եւ դառնայ թագաւորն անդրէն ի Գազա և հանգիստ առեալ և արծարծեալ զիր զարսն յաշխատութենէ, ինդրէր առնուլ զԾուր⁴⁶»:

Մովսէս Խորենացի, III. ԻԶ.

«Շապուհ գայ հասանէ ի Տիգրանակերտ մեր քաղաք: Կան ընդդէմ նորա արք քաղաքին հանդերձ գունարտակ գնդաւ ... Եւ հզար կոռոյ եղելոյ՝ զբազումս ի Պարսիցն սպանանեն. եւ ի պարտութիւն մատնեալ գնդին Շապուհ, դառնայ անդրէն ի Մծրին. եւ հանգիստ առեալ զարացն եւ արծարծեալ յաշխատութենէն, ինդրէր առնուլ զՏիգրանակերտ»:

2. «Ալեքսանդրի վեպ», Ճ (Ալեքսանդրը ցասկոտ նամակ է հղում տյուրոսցիներին).

«Թագաւոր Աղեքսանդրոս մակեդոնացոց, որդի Ամոնայ և թագաւորի Փիլիպոսի մանուկ և մեծ թագաւոր Ելրոպայ, Ասիայ և Լիբիայ, ծուրացոց, որք ոչ ևս են, սաէ. Ես սկիզբն արարեալ յասորոց յազգն կոյս հանդերձ խաղաղութեամբ և քաջարէն ազատութեամբ կամէի զմտն առնել: Եւ եթէ դուք՝ ծուրացիք, որ քաջ առաջին էք, ոչ քաղաքավարութեամբ սսեմ, այլ իմոյ ուղեորութեամբս ընդդէմ կայք ինձ, ի ձէնջ ուսցին և այլ (քաղաք) զարութեան, որչափ կարեն մակեդոնացիք առ ձեր գրել ընդվզեալ ամբարտաւանութիւնդ⁴⁷»:

Մովսէս Խորենացի, III. ԻԶ (Շապուհը ցասկոտ նամակ է հղում տիգրանակերտցիներին).

«Մազդեզանց քաջ Շապուհ արքայից արքայ. Տիգրանակերտեայց, որք ոչ ես էք անուանելոց ի մէջ Արեաց եւ Ասարեաց: Ես կամէի ի ձէնջ սկսեալ յամենայն առաջիկայ քաղաքս խաղաղութեամբ եւ քաջարէն ազատութեամբ զմտն առնել. եւ եթէ դուք Տիգրանակերտեայք, որ առաջին էք, ոչ շահատակութեամբ սսեմ, այլ ի մտե ուղեորութեանս, ընդդէմ կացէք ինձ, ի ձէնջ ուսցին եւ այլք զդոյնս առնել: Այլ ի դարձին իմում բարկութեամբ այնպէս վանեցից զձեզ, զի կրկին եղիջիք արինակ խեղեալ ստահակելոց»:

⁴⁶ Հայկական խմբագրութիւններ, էջ 140:

⁴⁷ Նույն տեղում, էջ 141:

3. Երրորդ զուգահեռը Թեբեի գրավման նկարագրության հետ է.
«Ալեքսանդրի վեպ», ՃԻԶ, ՃԻԷ.

«Աղեքսանդրոս ստեպլ զգալուն և ճանապարհսս անցեպլ զնսց ի Թեբայիս... Եւ թեբայեցիքն փսեցին զդրունն և ոչ հրեշտակ անգամ սուաբեցին ստ նս, այլ դէմ յանդիմանն ճակատեալք զինեցան ընդդէմ Աղեքսանդրի: Եւ ելեալ ի վերայ պարսպին զհնտորն հինգ հարիւր ճայնեցին ստ Աղեքսանդր և սսեն եթէ՝ «Կա՛մ պատերազմ տոր, կա՛մ ի բաց զնս ի քաղաքէս»: Եւ Աղեքսանդրոս ծիծաղեալ այսպէս սասց. «Ո՛վ քսջ թեբացիք... դուք զանձինս արգելեալ փակեցէք ի ներքս ընդ պարսպաքդ և արտաքդ յարիսկան ձայն արկանէք: Քանզի քսջ արանց է յազատ և յարձակ դաշտի կոռել, և կանանց գործ է արգելեալ և փակել զինքեանսն յերկիդէ ստ հանդերձեալ զկոհանն⁴⁸»:

Մովսես Խորենացի, III. ԻԶ և ԻԸ.

Իսկ Շասպուհ եկեալ ի Տիգրանակերտ, դարձեալ աղիսեցին ընդդիմանալ ննս (այլ եւ ոչ հրեշտակս սուաբեաց ստ նս, եւ ոչ զնորայնս ընկալաւ). եւ ելեալ ի պարիսպն աղաղակեին. «Գնա՛ ի մէնջ, Շասպո՛ւհ, զի մի՛ չարիս յերկրորդումս ընդ քեզ ստաւել ես քան զսոաջինն անցուցանիցեմք պատերազմաւ»: Եւ նս պատասխանեաց. «Ո՛վ քսջդ ի Հայոց, որք զանձինս արգելեալ փակեցէք ընդ պարսպաքդ Տիգրանակերտի եւ արտաքս ձայն արկանէք սպսոնալեաց. զի քսջ արանց է յարձակ դաշտի եւ յազատ տեղոց կոռել, եւ կանանց գործ է արգելուլ փակել զինքեանս յերկիդէ ստ հանդերձեալ կոհանն»:

Գերմանացի բանասեր Գիլգեմայստերը, որն արդեն 1886 թ. ցույց էր տվել «Ալեքսանդրի վեպի» և Խորենացու «Հայոց պատմության» միջև այս ակնառու զուգահեռները, նշել է, թե նման երևույթ դիտվում է Թուրքիզիդեսի «Պատմության» մեջ: Պլատեյայի պաշարման նկարագրության ժամանակ նա կիրառել է Հերոդոտոսի գրքի՝ մեկ այլ իրավիճակի վերաբերող ոճական հնարքները⁴⁹: Մենք պատճառ չունենք կասկածի ենթարկելու Շասպուհի և պարսից զորքի կողմից Տիգրանակերտի գրավմանը վերաբերող Խորենացու տեղեկությունները, քանի որ դրանք հաստատում է Փավստոս Բուզանդը (IV. ԻԴ)⁵⁰:

⁴⁸ Նույն տեղում, էջ 168-169:

⁴⁹ Տե՛ս 3. Տաշեան, նշվ. աշխ., էջ 64:

⁵⁰ Փաստոս Բուզանդ, Պատմութիւն հայոց, ՄՀ, Ա հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 355 (ընդօրինակված է Վեներիկ, 1933 հրատարակությունը):

հորենացին պարզապես Կեղծ-Կալլիսթենեսի օգնությամբ գոնավորել ու կենդանի շունչ է հաղորդել իր անհայտ աղբյուրի հավանաբար համառոտ և չոր շարադրանքին: Նրա պատումը հիմնականում շատ ճիշտ է ներկայացնում քաղաքներ գրավելու Շապուհի մեթոդը, որ այլ առիթներով նկարագրված են Ամմիանոս Մարկելլինոսի «Պատմության» մեջ⁵¹:

Մովսես հետո «Ալեքսանդրի վեպի» ամենից նշանակալի հետքերը գտնում ենք Թովմա Արծրունու «Պատմութիւն Արծրունեաց տան» երկում⁵²: Գրքի առաջին դպրության երրորդ գլխում Թովման հիշում է հեռավոր անցյալի դեպքերը և դատողություններ անում որոշ աշխարհագրական իրողությունների վերաբերյալ: Ասում է՝ իրեն հայտնի է Պտղոմեոսից, թե եմավոն լեռն արևելքում բարձր է բոլոր լեռներից, «անկոխելի ոտից մարդոց», իսկ կատարը հագիվ է տեսանելի, սես երկնքում լինի (հավանաբար խոսքը Հիմալայան լեռների մասին է): Դրանից այն կողմ մի լայնատարած հարթավայր է՝ «սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի ... եւ ի տունջեան ամպ թանձրախոծ»: Թովման ենթադրում է, որ այդտեղ է բնակվել առաջին մարդ Ադամը, այսինքն՝ դա դրախտն է: Երկրի նկարագրությունն այնուհետև ազդված է «Ալեքսանդրի վեպից», մասնավորապես Ալեքսանդրի՝ իր մայր Օլիմպիադային գրած նամակից (երկարաշունչ ՄԹ գլուխն է⁵³), և Արծրունին բացահայտ նշում է դա. «Զոր և Աղէքսանդրի Մակեդոնացույ ի դէպ ելանէ առ Ողըմպիադայ վիպագրութիւնք՝ թերեւս ի մասն ինչ արտաքոյ սահմանաց դրախտին հասանել»: Ուրեմն այն հրաշագան երկիրը, ուր հասել էին մակեդոնացիները, Թովմայի կարծիքով դրախտի սահմանն էր: Այնուհետև նա նկարագրում է մի «անծանալ զարմանալի ծառ»՝ հետևելով Կեղծ-Կալլիսթենեսին և մեջբերում անելով նրանից.

Կեղծ-Կալլիսթենես, էջ 257	Թովմա Արծրունի, էջ 73
... Միանգամայն ընդ արեգական ծագիլն և ծառքն աճէին մինչև ի վեց ժամ և ի վեց ժամէ աւուրն ի վայր նուազէր, մինչ զի բնաւ ոչ ինչ երեկի ի նոցանէ: Եւ	... Եւ անծանալ զարմանալի ծառոյն դէպք՝ ի միում աւուր ունել զաճմունս փոյթ ընդ փոյթ, եւ դարձեալ սուգականութիւնս յանկարծաւրէն լինել, որոց եւ շիթք ցաղոյն ունէր

51 Տե՛ս Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 31-35:
 52 Թովմա Արծրունի և Ամանուն, Պատմութիւն Արծրունեաց տան, ՄՀ, ԺԱ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010:
 53 Հայկական խմբագրութիւններ, էջ 253-264:

<p>արտաւար ունէին իբրև զպարսիկք ստաքտիկէ և հոտ՝ կարի յոյժ պիտանացու և անուշահոտ: Եւ ասացի հատանել զծառսն և սպունգով ժողովել զարտաւարն: Եւ յանկարծարէն յիմոց մանկանց անտի տանջեալք լինէին յաներևոյթ դիւաց. զտանջողացն զճողփիւն լսեաք, բայց տանջողքն ոչ երևէին: Այլ ձայն իմն գայր, որ ասէր. «Մի՛ հատանիր, մի՛ ժողովէր, եթէ ոչ՝ եղիցի անձն այն մեռեալ և ժանտ ախտիւ սատակեսցին գումարտակքն ամենայն»: Եւ ապա ասացի ո՛չ հատանել և ո՛չ ժողովել:</p>	<p>զանհամեմատ անուշահոտութիւն: Եւ ո՛չ արմատոցն միայն աւտար եւ անիմանալի սարասիցն տիպք, այլ եւ աներևոյթ պահպանողական եւ անհպելի զգուշաւորութիւնն, որք եւ ի մերձենալ անգամ տանջեալ լինէին յաներևոյթ զաւրութենէն: Զոր ես ո՛չ հաւանիմ ասել՝ ի դիւաց: Եւ զտանջողացն, ասէ, զճողփիւնն լսեաք, եւ զհարուածսն եկեալս ի վերայ թիկանցն տեսանէաք, բայց զտանջողան ոչ տեսանէաք: Այլ ձայն իմն գայր մի՛ ժողովել եւ մի՛ հատանել, թէ ոչ՝ եղիցի անձն այն մեռեալ եւ ժանդ ախտիւ սատակեսցի գումարտակդ»: Եւ ահաբեկ երկիւղիւ ի բաց կացաք յայնմանէ:</p>
--	---

Այնուհետև Թովման մի երկարաշունչ հատված է մեջբերում «Ալեքսանդրի վեպից»: Տարբերությունները շատ աննշան են՝ գրեթե տարբերակները արժեք ունեն.

Կեղծ-Կալիսթենես, էջ 261-263	Թովմա Արծրունի, էջ 73-74
<p>Եւ բազում անգամ աղաչէին զիս բարեկամքն իմ դառնալ, և ես ոչ կամեցայ, քանզի կամէի տեսանել զկատարած երկրին: Եւ ապա անդուստ խաղացեալ ընդ անապատ ճանապարհ և գնացեալ ի ծովակողմն կոյս, և ոչ ևս այնուհետև ինչ տեսանէաք՝ ո՛չ հաւս, և ո՛չ գազան, ո՛չ սողուն և ո՛չ թռչուն, բայց միայն զերկինս և զերկիրս: Եւ զարեգակն ոչ այլ տեսանէաք, այլ ընդ աղաւտ յաւդ յաւուրս տասն: Եւ եկեալ ի տեղի մի ծովային և զվրանսն և զամենայն բանական ի ներքոյ եղեալ, մտա-</p>	<p>Բազում անգամ աղաչեցին զիս բարեկամքն դառնալ, եւ ես ոչ կամեցայ, քանզի կամէի տեսանել զկատարած երկրի. եւ անդուստ խաղացեալք ընդ անապատ ճանապարհ, գնացաք ի ծովակողմն կոյս: Եւ ո՛չ եւս այնուհետև ինչ ո՛չ տեսանէաք՝ ո՛չ հաւ եւ ո՛չ գազան, բայց զերկին եւ զերկիր, եւ զարեգակն ո՛չ տեսանէաք, այլ ընդ աղաւտ աւդ յաւուրս տասն: Եւ եկեալ ի տեղի մի ծովային եւ զվրանսն եւ զբանական զամենայն ի ներքս եղեալ, մտա-</p>

նէաք ի նաւան: Եւ նաւէաք ի կղզի մի ծովուն, որ ոչ էր հեռի յերկրէն, յորմէ լսէաք խաւսս մարդկան հելլենական: Եւ որք խաւսէին, ոչ տեսանէաք: Եւ զինուորքն ի մահ վտանգի տուեալ զանձինս, լուսանցանել ի նաւէն ի կղզիին: Եւ խեցգետի մի ել կորգեաց և ձգեաց ի ջուրն զինուորս յիսուն և շորս: Եւ անցեալ գնացաք ի տեղացն երկուցեալք: Եւ եկայք երկուս աւուրս ի տեղիս, ուր արեգակն ոչ ծագեցաւ, և կամեցեալ իմ պատմել և ձեռն արկեալ տեսանել ի ձեռն ծառայից, ուր երջանկաց վայրն էին, Կալիսթենէս իմ բարեկամն խրատ ետ ինձ մտանել հանդերձ բարեկամաւք քառասուն եւ մանկամբք հարիւր և զինուորաւք հազար եւ երկերիւր: Եւ արտաքոյ յետ ճանապարհին իմացաք էշ մատակ, որ ունի յաւանակ, զորոյ կապեցաք անդրէն զյաւանակն ի բանակին: Եւ ի մտանելն մերում լարաւք հնգետասան, հաւք երկու պատահեցին մեզ, որ ունէին մարդկեղէն երեսս, և մեծ էին, քան զհաւս, որ առ մեզ լինին, և հելլենականաւ խաւսիւք ի բարձանց աղաղակէին. «Ձի՞ վայր կոխես զաստուածոց զտունն տեսանելով: Ընդ կրո՛ւնկ դարձիր, ո՛վ թշուառական, քանզի զերջանիկ կամար[ար]ացն զկղզիս կոխել ո՛չ կարես: Ձի՞ յերկինս ելանել բռնանաս, զոր ոչ է հնար»: Եւ դողդոջումն և սարսափումն զիս կալաւ յահէն և յերկիւղէն եղելոյ և ի հարկէ լուայ ի յաստուածայնոյ ձայնէն, որ ի յերկրորդ հաւուցն ասացեալ եղև:

նէաք ի նաւան եւ նաւէաք ի կղզի մի ծովուն, որ ո՛չ էր հեռի յերկրէն, յորմէ լսէաք խաւսս մարդկան հելլենական, եւ որք խաւսէինն՝ ոչ տեսանէաք: Եւ զինուորքն ի մահու վտանգ տուեալ զանձինս՝ ի լոյղս անցանել ի նաւէն ի կղզիին: Եւ խեցգետի մի ել, կորգեալ ձգեաց ի ջուրն զինուորս: Եւ անցեալ գնացաք ի տեղեացն երկուցեալք, եւ եկաք յերկուս աւուրս ի տեղիսն, ուր արեգակն ոչ ծագէ. եւ կամեցեալ իմ պատմել եւ ձեռնարկել տեսանել ի ձեռն ծառայից, ուր էր երջանկացն վայր, Կաղիսթենէս իմ բարեկամ խրատ ետ ինձ մտանել հանդերձ բարեկամաւք քառասուն եւ մանկամբք հարիւր, եւ զինուորաւք հազար եւ երկերիւր միայնովք: Եւ արտաքոյ յետ ճանապարհին իմացաք էշ մատակ, որ ունի յաւանակ, զորոց կապեցաք անդէն զյաւանակն ի բանակին. եւ ի մտանելն մերում լարաւք հնգետասան՝ հաւք երկու պատահեցին մեզ, որ ունէին մարդկեղէն երեսս, եւ մեծ էին քան զհաւանն որ առ մեզ լինին, եւ հելլենական խաւսիւք ի բարձանց աղաղակեցին. «Ձի՞ զվայր կոխես զաստուծոյ զտուն տեսանել, Աղեքսանդրէ, ընդ կրո՛ւնկն դարձիր, թշուառական, քանզի զերջանիկ կամարարացն կղզիս կոխել ո՛չ կարես. զի՞ յերկինս ելանել բռնանաս»: Դողդոջումն եւ սարսափումն զիս կալեալ յահէ յեր-

	կիւղէն եղելոյ. ի հարկէ լուայ յաստուածայնոյ սքանչելի ձայնին, որ ի հաւուցն ասացեայ եղև:
--	---

Թովմայի կարծիքով այդ թուշունները հրեշտակներ են. «Եւ դիպողագոյն է առ այս հրեշտակս զայնս ասել»:

«Ալեքսանդրի վեպի» հետ Մովսես Խորենացու և Թովմա Արծրունու երկերի այս բառացի զուգահեռները, հատկապես վերջին երկար մեջբերումը, կարևոր են՝ պարզելու համար, թե ինչ վիճակում է վեպի բնագիրը հասել մեզ (հարկ է նշել, որ Ալեքսանդրի նամակն Օլիմպիադային բացակայում է հունարեն հնագույն A խմբագրությունից և առկա է մյուսներում, սակայն տարբերվում է հայերեն բնագրից, ուստի Արծրունու քաղվածքը կարևորվում է նաև հունարեն սկզբնագրի տեսանկյունից):

Խաչատուր Կեչառեցին, որ ԺԳ-ԺԴ դարերում խմբագրել է հայերեն թարգմանության հնագույն բնագիրը, Վնտկ. 424 և մի քանի այլ ձեռագրերում պահպանված հիշատակարանում գրում է. «Նա զի հեթանոսական գրեալքն անմիաբան են և անվայելուչ ... թէպէտ էր յընտիր և ի հին արինակէ, այլ անյարմար և շողփաղփ, վասն որոյ զտեալ և քերեալ քերողարէն՝ արարի անսուտարինակ ճանապարհ»⁵⁴: Ուրեմն Կեչառեցին իր խմբագրական աշխատանքը բնորոշել է «քերեալ քերողարէն» բառերով: Կարող էր թվալ, թե նա «քերել-հանել» է բառեր, արտահայտություններ, ամբողջական հատվածներ: Սակայն Խորենացու և Արծրունու բառացի մեջբերումները փարատում են այդ տագնապը. իրականում Խաչատուր Կեչառեցին «Ալեքսանդրի վեպը» սոսկ թեթևակի է խմբագրել (օրինակ՝ հեթանոսական «աստուածք» փոխարինել է «չաստուածք»-ով), նաև որոշ հատվածներից հետո ավելացրել է ոտանավորներ, որոնք կա՛մ հստակեցնում են դրանց բովանդակությունը կա՛մ ավելի զգացմունքային ու կենդանի դարձնում այն: Ուստի «քերեալ քերողարէն»-ը թերևս կարելի է համարել «քերթեալ քերողարէն»-ի գրչական մի տարբերակ, այսինքն՝ «ստեղծագործաբար վերանայելով» կամ հենց շփածո հորինելով, արարելով «անսուտարինակ ճանապարհ»⁵⁵:

Այլ միջնադարյան հայ հեղինակներ էլ են դիմել «Ալեքսանդրի վեպին»,

⁵⁴ Հայկական խմբագրութիւններ, էջ 362-363:

⁵⁵ Հմմտ. 3. Տաշեան, նշվ. աշխ., էջ 88-95:

ասկայն նրանք փոխառել են միայն առանձին բառեր ու արտահայտություններ, երբեմն՝ Մովսես Խորենացու միջնորդությամբ: Հայերեն Կեղծ-Կալլիսթենեսի առաջին նման հետքը գտնում ենք Ղազար Փարպեցու «Պատմության» ՀԳ գլխում, որտեղ նա գրում է, թե ինչպես հայ-վրացական միացյալ զորքը, պարսիկների դեմ կռվի գնալիս լրտեսներ ուղարկելով, «տայր երեւեցուցանել լոյսս կրակաց բազմաց եւ կոճեղս ծառոց զինեալս այրանմանս, ըստ խաբէութեան Մակեդոնացոյ Աղէկսանդրի»⁵⁶: Սա հավանաբար արձագանք է Կեղծ-Կալիսթենեսի ՃՀԳ գլխի, որում Ալեքսանդրը «ոստս հատեալ կապեաց ի վերայ շորքտանեաց»՝ փոշի բարձրացնելու, մթնեցնելու և պարսիկներին «սրտաբեկ» անելու նպատակով⁵⁷:

«Ալեքսանդրի վեպի» ՃԾԸ գլխում կարդում ենք, թե ինչպես Ալեքսանդրը իր բանակով հասավ Մարաց երկիրը, որտեղից շտապեց Մեծ Հայք: Հետո եկավ «ի գետն Արածանի, որ հոսի ի ծաղկաւէտ լեռանցն Անգղայ գաւառին. և ակունքն է Եփրատայ՝ հանդէպ լերինն Արարատայ»⁵⁸: Փարպեցու ԼԱ գլխի Ծաղկուտն և Անգղ տեղանունները գուցե միասին հանդես են գալիս այդ հատվածի հետևություններով. «Ամենայն բազմութիւնն Հայոց ի տեղիս հովոց՝ գային հասանէին ի գաւառն որ կոչի Ծաղկուտն, մերձ ի բերդն ամուր, զոր Անգղն անուանեն»⁵⁹: «Ալեքսանդրի վեպի» նույն հատվածը թերևս ծանոթ էր նաև Սեբեոսին, քանի որ ԼԲ գլխում նա գրում է. «Եւ զարն Յունաց գումարեալ նստան ի Ծաղկոտանն, մերձ ի գեղն որ կոչի Անգղն, ընդ որ անցանէ գետն Արածանի»⁶⁰ (այն տարբերությամբ, որ Կեղծ-Կալիսթենեսի հայերեն բնագրում Անգղը գավառի անուն է, Փարպեցու մոտ՝ բերդ, իսկ Սեբեոսի մոտ՝ գյուղ):

ԺԱ դարի մատենագիր և քաղաքական գործիչ, դասական հունական գրականության և առասպելների գիտակ Գրիգոր Մագիստրոսն իր նամակներ-

⁵⁶ Ղազարայ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատասիրութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանցի, ՄՀ, Բ հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2327 (ընդօրինակված է Տփղիս, 1904 հրատարակությունը):

⁵⁷ Հայկական խմբագրություններ, էջ 208:

⁵⁸ Նույն տեղում, էջ 199: Ի դեպ, մեջբերված հատվածը համապատասխանում է հունարեն երկու բառի՝ τὸν Εὐφράτιον ποταμόν («Եփրատ գետին»), տե՛ս Pseudo-Callisthenis *historiam fabulosam ... edidit... Carolus Müller*, 2.9.2.1:

⁵⁹ Ղազարայ Պատմութիւն Հայոց, 2257:

⁶⁰ Պատմութիւն Սեբեոսի, ՄՀ, հտ. Գ, է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 507 (ընդօրինակված է հետևյալ հրատարակությունը. Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979 հրատարակությունը):

րում անուններ և արտահայտություններ է մեջբերում, որոնց աղբյուրն «Ալեքսանդրի վեպն» է. օրինակ՝ «Ալեքսանդրոս որդի Նեքտանեբեայ» (9[2])⁶¹, որի մասին անշուշտ գիտեր վեպի սկզբնական գլուխներից: Կամ՝ Հոմերոսի այն դրվագի հիշատակումն ու դրա մասին ակնարկները, որոնցում Զևսը հոնքերի շարժումով սասանում է Օլիմպոսը (9 [2], 26 [2Ա], 33 [ԾԴ], 40 [Խ]⁶²). հմմտ Կեղծ-Կալիսթենես, ՂԳ. «Ուրպէս ասաց սքանչելի երգիչն այն Հոմերոս. «Եւ կապուտակային յաւնաւքն ակնարկեաց Զրուանեան, և սքանչելի աստուածային վարսքն շարժեցան անմահ գլխոյն թագաւորին, և մեծապէս շարժեալ տատանեցաւ Ոլիմպոս»⁶³: Մագիստրոսն ակնարկ է անում Ալեքսանդրի թունավորվելու, փսխելու համար փետուր խնդրելու և թունի մեջ թաթախված փետուրով նենգաբար կրկին թունավորվելու պատմությունը («Ե՛կ դու, յորժամ Ալեքսանդրոս զմահացուցիչն կամէր արտաքսել, դարձուցանելով կրկին թեւոյն թաթախեալ ի ժահր, սպանութեան եղև փութացուցիչ»), 24 [ԺԹ]⁶⁴), հավանաբար՝ «Ալեքսանդրի վեպի» ՄԿԶ գլխի հետևություններ. «Իսկ Ալեքսանդրի ... կամեցեալ զկարի շատ գինին փղձկեալ, խնդրեաց թև, քանզի սովոր էր այսպէս առնել: Եւ շար Ուղղոսն, շաղախեալ դեղովն՝ մատոյց նմա, վասն որոյ եւ առաւել կարի յաղթեաց դեղն անապականագոյն ընդ մարմինն խառնեալ և բախեալ»⁶⁵: Չնայած բերված հատվածների միջև բառացի նմանություն քիչ կա, սակայն դրանց կապը մատնում է «թև» բառը՝ «փետուր»-ի փոխարեն, ինչը բացատրվում է հունարեն *πτερόν* բառի երկիմաստությամբ (այն նշանակում է և՛ փետուր, և՛ թև):

Մագիստրոսը հիշատակում է եգիպտական եղջյուրավոր Ամոն աստծուն և Նեքտանեբոս մոգին, որը նրա կերպարանքն է ընդունում. «զԱմոնոսն հար եղջերաւքն առնի պատկանեալ պաշտէին, որովք Նեքտանեբոս կիւսոյ պատ-

⁶¹ **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթք և չափաբերականք*, ՄՀ, ԺԶ հատոր, ԺԱ դար, Երևան, 2013, էջ 222 (փակագծերում նշված է նամակի համարը, իսկ ուղղանկյուն փակագծերում՝ [], նույն նամակի համարը հին հրատարակության մեջ՝ *Գրիգոր Մագիստրոսի թղթերը*, բնագիրն առաջաբանով եւ ծանօթագրություններով առաջին անգամ ի լոյս ընծայեց **Կ. Կոստանեանց**, Ալեքսանդրապոլ, 1910):

⁶² **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթք և չափաբերականք*, էջ 222, 293, 304, 315:

⁶³ Հայկական խմբագրություններ, էջ 136:

⁶⁴ Նույն տեղում, էջ 279:

⁶⁵ Հայկական խմբագրություններ, էջ 336-337: Հմմտ. *Pseudo-Callisthenis ... edidit ... Müller*, 3.3.1-2. *ὁ δὲ Ἀλέξανδρος ἀπερᾶσαι βουλόμενος τὸ πολὺ τοῦ οἴνου ἤθησε πτερόν· εἶθιστο γὰρ οὕτως ἐμεῖν. ὁ δὲ Ἰόλλας περιχρίσας τῷ φαρμάκῳ ἔδωκεν αὐτῷ· διὸ πολὺ ἐνήργει τὸ φάρμακον, ἀκρατέστερον εἰς τὸ σῶμα προσενεχθέν:*

րանս պատշաճէր մոլորութեանն եւ զուարակ եղջերաւքն կիսագնդակ յարմարեալ ըստ լուսնական հմայահաւանութեան վարկանէին» (47[ԽԹ]⁶⁶), հմմտ. «Նեգդանիբոս վերջին թագաւոր եգիպտոսի, զկնի որոյ թագաւորութեան պատուոյ անկաւ, մոգական կախարդութեամբ ամենեցուն յաղթել, մինչ զի աշխարհական տարերց հնազանդել նմա»⁶⁷: «Ալեքսանդրի վեպում» պատմվում է, որ Նեքտանեբոսը Օլիմպիադային տիրացավ խաբէությամբ, համոզելով նրան, որ իր ապագա անպարտելի որդու հայրն Ամոն աստվածն է, իսկ Ամոնը նկարագրվում է խոյի եղջուրներով⁶⁸:

Մագիստրոսին ծանոթ է Ալեքսանդրի հայտնի Բուկեփալոս ձին՝ «զուարակագլուխն յորջորջեալ» (76 [ԺԷ]⁶⁹). հմմտ. այդ բնորոշումը՝ «երիվարն զուարակագլուխ», «զուարակագլուխ ձին»⁷⁰, բայց նաև՝ «կոչեցեալ երիվարայն ցլագլուխ», «Այս է ցլագլուխ ձին, զոր հայրն քո արգելեալ փակեաց, վասն զի մարդակեր է»⁷¹: Այդ արտահայտությունը՝ «մարդակեր, որպէս զուարակագլուխ ձին Ալեքսանդրի» գտնում ենք նաև Միսիթար Գոշի «Դատաստանագրքում» (II.ՃԺ)⁷²:

Հեթում պատմիչի (ԺԳ-ԺԴ դդ.) «Պատմութիւն թաթարաց» երկի (1307 թ.) բնագիրը հին ֆրանսերեն է: Հեղինակի պատմածը գրի է առել և ապա լատիներեն թարգմանել Նիկոլա Ֆոլկոնը (Nicolas Faulcon), իսկ Մկրտիչ Ավգերյանն այն լատիներենից գրաբար է թարգմանել և հրատարակել 1842 թ.: Ապա եղել են տարբեր լեզուներով այլ թարգմանություններ: Այս երկում էլ կան հատվածներ, որոնց աղբյուրը հավանաբար Կեղծ-Կալլիսթենեսն է: Զ գլխում, որ Հնդկաստանի նկարագրությունն է, Հեթումը գրում է. «Ի հիւսիսոյ կողմանէ է երկայն և մեծ անապատ հնդկաց, ուր օձս բազումս և ազգի ազգի կենդանիս եգիտ, ասեն, Ալեքսանդր ինքնակալ»⁷³: Հատվածն

⁶⁶ Գրիգոր Մագիստրոս, Թուղթք և չափաբերականք, էջ 325:

⁶⁷ Նույն տեղում, էջ 69:

⁶⁸ Նույն տեղում, էջ 75, 78:

⁶⁹ Նույն տեղում, էջ 365:

⁷⁰ Հայկական խմբագրություններ, էջ 226, 232, 272, 351, նաև Խաչատուր Կեչառեցու կաֆայի կազմում՝ «զուարակագլուխ ձի էրիվար», էջ 94:

⁷¹ Հայկական խմբագրություններ, էջ 100, 105: Հմմտ. Pseudo-Callisthenis ... edidit ... Müller, 1.17.2-3. 'Οὗτός ἐστιν ὁ Βουκέφαλος, ὃν ὁ πατήρ σου ἐνέκλεισεν διὰ τὸ ἀνθρωποφάγον αὐτὸν εἶναι:

⁷² Միսիթար Գոշ, Գիրք դատաստանի (Բ խմբագրություն), ՄՀ, ԺԹ հատոր, ԺԲ դար, նույն տեղում, գիրք Ա, երևան, 2014, էջ 595:

⁷³ Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն

առնչություն ունի «Ալեքսանդրի վեպ»-ում Հնդկաստանի նկարագրության հետ (Ալեքսանդրի՝ Արիստոտելին հղած երկար նամակում, որ ՄԻԴ գլուխն է⁷⁴): Հեթումը նաև խոսում է (գլուխ Ժ) Համշեն գավառի մասին, որտեղ միշտ խավար է, անտեսանելի արարածների մարդկային ձայներ են լսվում, թռչունները խոսում են և այլն⁷⁵: Հիմքում Ալեքսանդրի նամակն է իր մորը (ՄԹ), որից Թովմա Արծրունին երկար մեջբերում է արել⁷⁶:

Վերջապես նշենք «Ալեքսանդրի վեպի» հետ երկու միջնորդավորված գուգահեռ՝ քաղված Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»: Առաջինը Ստեփանոս Ասողիկի երկում է՝ Խոսրով արքայի մասին. «Մարմնով փոքր, այլ ոչ որքան Մակեդոնացին Աղեքսանդր» (Բ1)⁷⁷ (հմմտ. ՃՀԹ. «Պարսիկքն պշուցեալ հայէին յԱղեքսանդրոս և զարմացեալ ընդ մարմնոյն փոքրկութիւն», ՄԺԹ. «Պովրոս էր կանգուն հինգ, իսկ Աղեքսանդր՝ կանգունս երիս»⁷⁸, և Խորենացի (III Ը). «Զի թէպէտ էր մարմնովն փոքր, այլ ոչ որքան Մակեդովնացին Աղեքսանդր, որ միայն երից կանգնոց ունէր զչափ հասակի»): Մյուսը ներսես Շնորհալու «Վիպասանութիւն» պոեմում է. «Նոր Աքիլեւս աստ երեւեալ, // Ընդ Սկամանդրոս գետըն վազեալ // Եւ զՔրոնեա գերազանցեալ, // Երկու եւ քսան կանգուն քայլեալ»⁷⁹:

Խաչատուր Կեչառեցին, Գրիգորիս Աղթամարցին և Զաքարիա Գնունեցին

հ. Մ. Աթոռակալ վարդապետի Աւգերեան, Վենետիկ, 1842, էջ 10-11: Հմմտ. Hayton, “La flor des estoires de la terre Orient”, *Recueil des historiens des croisades, Documents Arméniens*, tome second, *Documents latins et français relatifs à l’Arménie*, par J. Dardel, Paris, 1906, p. 125: “Devers septentrion par long est le grand desert d’Inde, là où l’empereour Alisandre trouva si grant diversete de serpens e de bestes, si com contient en ses estoires”, և “Flos historiarum terre orientis”, *ibid.*, p. 265: “Ex parte septentrionis perlonge, est magnum desertum Indie, ubi tot serpentes et animalium diversitates imperator Alexander dicitur invenisse, sicut in suis hystoriis continetur”:

⁷⁴ Հայկական խմբագրություններ, էջ 284, 286-287, 289-290, 297, (ողջ գլուխը՝ էջ 282-297):

⁷⁵ Հեթում պատմիչ, Պատմություն թաթարաց, էջ 15: Հմմտ. Hayton, “La flor des estoires de la terre Orient”, p. 129: “en Jorgie si a une province, que l’om apelle Hamsen, que tien bien III jornées environ, et tant come dure cele province, partout y a une si grant obsculté que nul home n’i puet riens voer ... E les habitors de cele terre content que il oient vois d’omes, chant de coc...”, և “Flos historiarum terre orientis”, *ibid.*, p. 269: “In illis partibus est quedam provincia que vocatur Hanisem ... per totum quadam tenebrosa caligine locus ille taliter offuscatur, quod nullus est qui aspicere possit quicquam ... Habitatores illius patrie asserunt se sepius audivisse voces hominum vociferantium, cantus galli...”:

⁷⁶ Հայկական խմբագրություններ, էջ 262-263:

⁷⁷ Ստեփանոս Տարսնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, ՄՀ, ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրություն, Գիրք Բ, Երևան, 2011, էջ 678-679:

⁷⁸ Հայկական խմբագրություններ, էջ 218 և 273:

⁷⁹ ՄՀ, ԻԱ հատոր, ԺԲ դար, Ներսես Շնորհալի, Գիրք Ա, Երևան, 2018, էջ 108-109

Կեղծ-Կալլիսթենեսի վեպը ճոխացրել են կաֆաներով⁸⁰: Հ. Սիմոնյանը նշում է, որ կաֆաները սովորաբար արձակ բնագրերի մեջ ներմուծված ութատող, 7/8 շափով գրված ոտանավորներ են, որոնք վերաշարադրում են նախընթաց հատվածը կամ արտահայտում դրա հետ կապված որևէ խոհ, վերաբերմունք կամ տրամադրություն: Բացի «Ալեքսանդրի վեպից», կաֆաներ են ներմուծված «Պղնձե քաղաքի պատմության», «Փահլուլ թագավորի պատմության» և «Մանկան ու աղջկա պատմության» մեջ: Երբեմն հանդիպում են նաև ինքնուրույն, առանց արձակ բնագրերի շրջանառվող կաֆաներ⁸¹: «Ալեքսանդրի վեպն» ամենից կաֆայաշատ երկն է: Հ. Սիմոնյանն իրավամբ հավանական չի համարում Մ. Ավդալբեգյանի⁸² այն ենթադրությունը, թե գոյություն է ունեցել ինչպես Կեչառեցու հեղինակած՝ Ալեքսանդրի չափածո մի պատմություն՝ «Ալեքսանդրի տաղ»⁸³:

Վեպի մեջ ներմուծված կաֆաներում երբեմն գործող անձինք համեմատվում են աստվածաշնչյան կերպարների հետ: Կաֆաների շարքում պատահում են բանաստեղծական գեղեցիկ հատվածներ, սակայն մեծ մասը միջակ որակի են, իսկ երբեմն՝ անհաջող ու անճաշակ:

Պատմության վերջում Կեչառեցին ավելացրել է բարառություններ՝ «Թէ որպիսի ողբս վտանգալից եւ աղէտս աւաղականս ասացեալ է բարառնաբար Աղեքսանդր ի հիւանդութեան իւրում», «Եւ թէ իւր զրկեալ եւ տառապեալ որպէս ողբայր Ուոմպիադա մայրն Աղեքսանդրի», «Եւ թէ որպիսի ողբս յօրինեաց դուստր Դարեհի Հոռքսիանէ, կինն աշխարհակալին Աղեքսանդրու», «Եւ թէ նախարարք եւ զաւրջն զորպիսի կական բարձեալ լան զթագաւորն իւրեանց», «Եթէ ամենայն վարուց յաղթութեան եւ արիութեան, նա եւ զվախճանն նշանաւք առ Տէրն մեր որպէս, զոր բերեմք մարգարէութեամբ»⁸⁴: Այդ ժանրը՝ «դիմառնութիւն» և «կերպարանառնութիւն» տարատեսակներով,

⁸⁰ Ծագում է արաբերէն qāfiyya «բանաստեղծական հանգ» բառից, տե՛ս Հ. Աճառյան, *Հայերէն արձատական բառարան*, Բ. Ֆ, Երևան, 1973, էջ 563: Առաջին անգամ օգտագործել է Գրիգոր Մագիստրոսը՝ իր «Հազարատողեան» պոեմի առաջաբանում, որտեղ իբրև միախանգ է բնորոշում արաբական բանաստեղծությունը. «Տաղասացութիւնք արաբացոցն... միայալ աւարտեալ գծի, զոր դոմ կափիա (տարնընթերցումներ՝ գափիէ, կափայ) անուանէ», **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթք և չափաբերականք*, էջ 140:

⁸¹ Հ. Սիմոնյան, *Հայ միջնադարյան կաֆաներ*, էջ 35:

⁸² Մ. Ավդալբեգյան, *Խաչատուր Կեչառեցի*, Երևան, 1958, էջ 74-75:

⁸³ Հ. Սիմոնյան, *նշվ. աշխ.*, էջ 71:

⁸⁴ Հայկական խմբագրութիւններ, էջ 355-360:

հայտնի է Ե դարավերջի կիսաթարգմանական ճարտասանական ձեռնարկից՝ «Պիտոյից գրքից»⁸⁵: Գրքում ներկայացված տասը տեսակի ճարտասանական վարժություններից բարառնությունն ու դիմառնությունն են, որոնց ամենից հաճախ են դիմել հետագա հայ հեղինակները⁸⁶: Դրանք ճառեր են՝ արտասանված իրական կամ երևակայական անձանց անունից որևէ դրամատիկ իրադարձության (Կեչառեցու հորինածները՝ Ալեքսանդրի մահվան) առիթով:

Հետաքրքիր է, որ մի բարառնության մեջ Կեչառեցին Ալեքսանդրին համեմատում է Հիսուս Քրիստոսի հետ⁸⁷: Նա գրում է. «Ապա որչափ ևս առաւել այրս այս սքանչելի Աղեքսանդրոս Մակեդոնացի տիպ և գաղափար եղև երկնակալ թագաւորին մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Հետո, Սուրբ Հոգուց ներողություն խնդրելով անհարկի թվացող համեմատության համար, հաստատում է իր կարծիքը նմանատիպ բնորոշումների և կյանքի հանգամանքների մի բռնագրոսիկ ցանկով. Ալեքսանդրը ծնվել է Մակեդոնիայում Օլիմպիադայից՝ եգիպտացի մոգ նեքսանեբոսի խաբեության հետևանքով, իսկ Տէր Հիսուս Քրիստոսը՝ Մարիամից Բեթղեհեմում՝ բանսարկուի (օձի) խաբեության հետևանքով, Ալեքսանդրը կրթվել է աթենացիների դպրոցյամբ, իսկ Տէրը՝ հայրական իմաստությամբ, Ալեքսանդրը տիրել է եգիպտոսին, իսկ Տէրը կանչվել է եգիպտոսից, Ալեքսանդրը հաղթել է Դարեհին, Հիսուսն էլ հաղթել է սատանային, Ալեքսանդրը հնազանդեցրել է խուժադուժ ու բարբարոս ազգերին, իսկ Տէրը կոչել է հրեաներին ու հեթանոսներին, Ալեքսանդրին թագավորներն էին հեռվից ընծաներ բերում, Տիրոջը՝ «թագաւորքն Արաբայ և Սաբայ», Ալեքսանդրը գահընկեց է արել հնդիկների թագավոր Պովրոսին, իսկ Տէրը՝ խավարի իշխանին և այլն:

Գ խմբագրությունն «Ալեքսանդրի վեպի» խիստ համառոտված և բավական ձևափոխված բանավոր տարբերակ է, որում վառ արտահայտվել է ժողովրդական և էպիկական մտածողությունը: Այստեղ էլ կաֆաներ կան, սակայն ի տարբերություն հին խմբագրության կաֆաների՝ դրանք մեծ մասամբ սոսկ լրացումներ չեն, այլ պատումի անկապտելի մաս, այսինքն՝ որոշ դրվագներ չափաժոռ են շարադրված: Պատմությունն այսպես է սկսվում. «Կայր

⁸⁵ Գիրք պիտոյից, աշխատասիրությամբ Գ. Մուրադյանի, Երևան, 1993, էջ 184-185, և նման վարժությունների օրինակներ՝ էջ 185-200, 239-247:

⁸⁶ Ա. Ղազինյան, «Դիմառնությունը հայ միջնադարյան բանաստեղծության մեջ», ԼՀԳ 1974, 5, էջ 32-41:

⁸⁷ Հայկական խմբագրութիւններ, էջ 360-362:

Թագաւոր մի Փիլիպէ անուն և նստէր ի Թեսաղոնիկէ քաղաքին, որ է Սելենիկ: Եւ նա շինեաց յետոյ քաղաքն Ֆիլիպեայ և անուանեաց զանուն նորա Ֆիլիպուպոլիս՝ ըստ անուան իւրոյ: Եւ ունէր թագաւորն այն թագուհի մի աննման գեղեցիկ, և անուն նորա Օլոմպիադա: Եւ թագաւորն Ֆիլիպէ ոչ ունէր սերմն որդեծնութեան: Եւ էր անցեալ բազում ժամանակ, և ոչ ունէին զաւակ՝ ժառանգ աթոռոյն իւրեանց: Դարձեալ կայր թագաւոր մի յեգիպտոս՝ Նեգդանիբոս անուն: Սա լուաւ զգեղեցկութիւն Օլոմպիադայ, վասն որոյ յոյժ ցանկայր տեսանել զգեղեցիկ պատկեր նորա և բազում ժամանակ խորհէր ի սրտի իւրում ... զի ... կատարեսցէ զչար ցանկութիւն սրտի իւրոյ»: Եվ Նեկտանեբոսը լուծում է գտնում. երբ Փիլիպոսը բացակա է, գալիս է Փիլիպուպոլիս՝ բժշկի հանդերձանքով. «Որպէս թէ եկեալ է ճարտար բժիշկ մի և գիտէ բազում հնարս բժշկութեան, մանաւանդ որդէծնութեան»: Երբ Օլիմպիադան հարցնում է՝ արդյո՞ք նա ունի մի «գեղ որդէծնութեան», նա անմիջապէս առիթից օգտվում է և մի քանի անգամ տիրանում թագուհուն՝ կերպարանափոխված օձի, արծվի, շար վիշապի: Արդյունքում ծնվում է Ալեքսանդրը, որը տասնհինգ տարեկանում ցանկանում է պարզել, թե ով է իր հայրը, սակայն մայրը խստիվ պահում է գաղտնիքը: Ալեքսանդրը ճշմարտությունն իմանում է աստղերից և, մորը մեղադրելուց հետո, արտասանում հետևյալ տողերով սկսվող բանաստեղծությունը. «Օձն էր կորստեան պատճառ, // որ եհան զԱդամ ի դրախտէն. // Հանց Նեգդանիբոս արար, // զկինն եհան ի Փիլիպոսէն...» Յլագլուխ ձին ծովից ելած մի հսկա առասպելական էակ է, և թագավորի ողջ զորքը չի կարող բռնել կամ մոտենալ նրան: Սակայն, տեսնելով նորածին Ալեքսանդրին, ձին իսկույն հնազանդվում է իր ապագա տիրոջը և գլուխը խոնարհում նրա առաջ⁸⁸:

Տիգրան Գույումջյանը ենթադրում է, որ նկարագրողումներ առաջին անգամ կցվել են բնագրին կաֆաների հետ միաժամանակ՝ ԺԳ-ԺԴ դդ., և առաջին ծաղկողը հենց խաչատուր Կելառեցին է եղել: Գույումջյանը նաև նշում է, որ «Ալեքսանդրի պատմությունն» աշխարհիկ բովանդակությամբ ամենավաղ երկն է, որին մանրանկարների շարք է հատկացվել⁸⁹:

⁸⁸ Հայկական խմբագրություններ, էջ 446-450:

⁸⁹ **D. Kouymjian**, “Illustrations of the Armenian Alexander Romance and the Motifs from Christian Iconography,” *Jos Weitenberg Festschrift*, pp. 153-157 (149-182), in press (տե՛ս <https://www.academia.edu/33443324> / Dickran Kouymjian Illustrations of the Armenian Alexander Romance and Motifs from Christian Iconography Jos Weitenberg Festschrift Hebrew University Armenian Studies series Louvain Peeters in press. pp. 149-182. page proofs 2015):

Քննելով «Ալեքսանդրի վեպի» հայկական ձեռագիր ավանդույթը՝ նկարագարողումներով հանդերձ, էդդա Վարդանյանը եզրակացրել է, որ, ի տարբերություն Բյուզանդիայի ու եվրոպական երկրների, որտեղ Ալեքսանդրի կերպարն օգտագործում էին թագավորական քարոզչության համար, Հայաստանում նա սովորաբար հանդես է եկել քաղաքական ճգնաժամերի ընթացքում ու արտաքին թշնամիների հետ պատերազմական իրավիճակներում: Ալեքսանդրը, իբրև օրինակելի ու հզոր միապետի կերպար, ոգևորել է հայերին և պետականությունը վերականգնելու ու արդարությունը վերահաստատելու հույսեր ներշնչել⁹⁰:

Իսկ անկախ քաղաքականությունից՝ երկի զանազան խմբագրություններն ու դրանք պարունակող ձեռագրերի մեծ թիվը՝ հաճախ ճոխ նկարագարողումներով (մոտ ութսուն պահպանված ձեռագրից տասնչորսը նկարագարված են. դրանցից վաղագույնը Վնտկ. 424-ն է, իսկ հաջորդ հինգն ընդօրինակվել են մոտ 200 տարի անց), վկայում են, որ «Ալեքսանդրի վեպը» միջնադարում հայերին շատ սիրելի գիրք է եղել: Այն մնում և մնալու է այդպիսին՝ շնորհիվ իր հետաքրքրաշարժ ու հրաշապատում բովանդակության:

ARAM TOPCHYAN

**THE TEXTUAL TRADITION OF THE OLD ARMENIAN VERSION OF
THE ALEXANDER ROMANCE AND ITS INFLUENCE ON
MEDIEVAL ARMENIAN LITERATURE**

Key words: Pseudo-Callisthenes, Greek recensions, Armenian recensions, manuscripts, borrowings, “stylistic dress”, Movsēs Khorenats’i, Tovma Artsruni, Grigor Magistros.

The article briefly discusses four old Armenian recensions of the Alexander Romance in comparison with those of the original Greek text. Three of the Armenian recensions (Ա [A], Բ [B] and Գ [C]) have been included in the “diplomatic”

⁹⁰ **Edda Vardanyan**, “La portée politique de l’illustration des manuscrits du Roman d’Alexandre arménien,” pp. 247-249.

edition prepared by Hasmik Simonyan, who has erroneously regarded recension B (instead of A) as the oldest Armenian witness. The fourth, short recension, which may be of interest with regard to the textual tradition of the work, has not been published yet and is currently prepared for publication by the author. As for the possible fifth, “intermediary” recension, it still remains somewhat obscure and needs further study.

The article also summarizes the importance of the Alexander Romance, as a work of fiction and a “stylistic repository”, for such major Armenian authors as Movsēs Khorenats‘i, T‘ovma Artsruni, Grigor Magistros, et al.

АРАМ ТОПЧЯН

**ТЕКСТУАЛЬНАЯ ТРАДИЦИЯ ДРЕВНЕАРМЯНСКОГО
ПЕРЕВОДА РОМАНА ОБ АЛЕКСАНДРЕ И ЕГО ВЛИЯНИЕ НА
СРЕДНЕВЕКОВУЮ АРМЯНСКУЮ ЛИТЕРАТУРУ**

Ключевые слова: Псевдо-Каллисфен, греческие редакции, армянские редакции, рукописи, заимствования, “стилистическое одеяние”, Мовсес Хоренаци, Товма Арцруни, Григор Магистрос.

В статье кратко охарактеризованы четыре древнеармянские редакции Романа об Александре в сопоставлении с редакциями греческого оригинала. Три из армянских редакций (Ц [A], Բ [B] и Չ [C]) были включены в “дипломатическое” издание, подготовленное Асмик Симонян, которая ошибочно считала редакцию В (а не А) самой ранней. Четвертая, краткая редакция, которая может быть интересна с точки зрения текстуальной традиции памятника, впервые готовится к изданию автором настоящей статьи. Что касается возможной пятой, «промежуточной» редакции, вопрос о ее существовании нуждается в исследовании.

В статье также подытожено значение Романа об Александре как художественного произведения и “хранилища стилистических приемов” для таких армянских авторов, как Мовсес Хоренаци, Товма Арцруни, Григор Магистрос и др.